ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Դպրոց- Բարձրունու միջնակարգ դպրոց

Ուսուցիչ- Մարիետա Հակոբյան

Ղեկավար- Օհանեսյան Կիմա

ՎԱՅՔ 2023

Բովանդակություն

Ներածություն.....4

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցեր·····.....6

Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը և կարևորությունը նոր սերունդների դաստիարակության գործում·····.7

Ազգային արժեքների դրսևորումը «Մայրենիի» դասավանդման ընթացքում.....10

Եզրակացություն.....15

Գրականության ցանկ·····17

Հավելված 1·····.18

Ներածություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության բավական լայն ըմբռնում ունի: Առավել ընդունված է տեսակետը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի բազմակողմանի, ներդաշնակ ձևավորման և զարգացման համար: Այսպիսով արժեհամակարգը բազմատարր երևույթ է, որի բոլոր ճյուղերը փոխկապակցված և անհրաժեշտ են ուսումնառության շրջանում:

Հանրակրթական դպրոցում արժեքային համակարգի ճիշտ ընկալումը հնարավորություն է տալիս հայրենիքին նվիրված, բազմակողմանիորեն զարգացած, գրագետ, բարոյական բարձր նկարագիր ունեցող քաղաքացիներ կրթել ու դաստիարակել: Անկախ սովորողի անձնային որակներից՝ նրա մոտ պետք է ձևավորվի հավասարակշռված, բարեկիրթ վարքագիծ, որը նրան հնարավորություն կտա ազգային հպարտությունը, ազգասիրությունը, ազգային մտածողությունը զուգակցել մարդասիրության, աշխատանքային պատասխանատվության, դժվարությունները հաղթահարելու որակների հետ:

Տարրական դպրոցում ուսումնասիրվող առարկաները հիմք են հանդիսանում աշակերտների բարոյական, իմացական և գեղագիտական արժեքների ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքը կրում է «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում» վերնագիրը:

Թեման ընտրելիս հաշվի եմ առել **թեմայի արդիականությունը** և ժամանակակից հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական, ազգային-հասարակական նորմերի ճիշտ արժևորումը, ազգային դիմագծի պահպանումը,նոր սերունդների գիտակցության մեջ այդ նորմերի ամրակայումը և դաստիարակության գործում դրանց կիրառումը: : Ժամանակակից դպրոցը պետք է ջանք չխնայի ստեղծել այնպիսի մեթոդներ որպեսզի հնարավորինս պահպանի ազգային դիմագիծը: Գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ նորամուծություններ են թափանցում մեր միջավայր, այդ իսկ պատճառով հարկ է զտել այդ նորը, գտնել միայն ճշմարիտը և մատուցել , նորի կողքին մոռացնել չտալ ազգային նկարագիրը: Սակայն ասել, որ այսօր արժեքային համակարգում տեղի ունեցող փոփոխությունների պատճառը միայն նորամուծություններն են, սխալ կլինի: Արժեհամակարգի պահպանման գործում առաջնային ու կարևորը դերը դրված է ուսուցչի ուսերին: Ուսուցիչը, բարձր կոչմամբ մուտք գործելով կրթական միջավայր, գիտակցում է ՝ ունի իր ուսերին դրված առաքելություն՝ կրթել և դաստիարակել հայրենիքին և պետությանը արժանի, պատվախնդիր, բարոյական, ազգային և ավանդական արժեքները համամարդկային արժեքների համադրմամբ առաջնային և բարձր պահող անհատներ: Սովորողի արժեքային համակարգի ձևավորման հիմքում դրվում է ճշմարտությունը և սերը: Ուրեմն երեխայի մեջ պետք է սերմանել սեր հայրենիքի, ազգի, հավատի,ընտանիքի, ազգային արժեքների նկատմամբ, իսկ ժամանակի ընթացքում այդ սերը պետք է մեծացնել և ավելացնել, հասցնել գիտակցական ամենաբարձր մակարդակին: Այդ ամենի համար պետք է կարևորագույն բոլոր արժեքների միախառնումը: Միայն բոլոր արժեքների միասնությունը կարող է դառնալ կերտել հայրենիքին պիտանի անհատ: Կարևոր արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք

գոյացնում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկայի հիմքը և դառնում դեպի ապագա աներեր քայլքի երաշխիքը: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող որակական և բովանդակային բազմաթիվ փոփոխություններ կարծես մարտահրավերներ են ստեղծում արժեքային համակարգում՝ կշեռքի մի նժարին դնելով ազգային - ավանդական արժեքները, մյուսին՝ համամարդկային արժեքները:

Թեմայի նպատակն է վեր հանել և վերլուծել այն խնդիրները, որոնք առաջանում են սովորողների մոտ առարկայի դասավանդման ժամանակ արժեհամակարգ ձևավորելու ընթացքում: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք **խնդիրներ՝**

• Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

• Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները:

• Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն:

• Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնահարցերը

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր բաղադրիչներից են հավատն ու սերը:

Անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրի կարևորությունը կապված է այն բանի հետ, թե ինչպես է փոխվում աշխարհը: Եթե նախորդ դարերում ժամանակակից աշխարհում ար փոփոխության, հասարակության արժեքային պատկերացումների շարունակական վերարժևորման գործընթացներից:

Կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են սովորողի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը,կենցաղը, կյանքի ոճը և այլն: Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ սովորողի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:[1]

Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը և կարևորությունը նոր սերունդների դաստիարակության գործում

[1] Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Մակմիլան-Արմենիա, 2007

Կրթամշակութային ժամանակակից հարացույցը հիմնվում է մարդասիրական գաղափարների վրա, որոնք ընդհանրացնում են ճանաչողության էմպիրիկ փորձը և նրա տեսական իմաստավորումը: Ազատության գաղափարի գերակայությունը մարդասիրական արժեքների համակարգում պայմանավորված է նրանով, որ ազատության գաղափարը դրսևորվում է որպես մտքի և հոգու ազատություն՝ ընդգրկելով քաղաքականությունը, սոցիալական հարաբերությունները, գիտությունը, կրթությունը, բարոյականությունը:[2]

Մանկավարժական մեծ հանրագիտարանում «Արժեբանություն» եզրույթը ներկայացված է մի շարք սահմանումներով՝

1. Փիլիսոփայական ուսմունք է արժեքների և բարոյագիտական գնահատումների մասին (արժեքների բարոյագիտություն), որը մասնավորապես ուսումնասիրում է մարդու կյանքի իմաստը,

2. Մանկավարժական նոր հասկացություն, որն ուսմունք է մարդկային արժեքների բնույթի, կյանքի իմաստի, մարդկային գործունեության վերջնական նպատակի մասին: Արժեքը մնայուն նշանակություն ունեցող գործ է, ստեղծագործություն, ավանդ, ներդրում, իրական հատկանիշ, արժանիք: Այն «առարկա է, երևույթ, սոցիալական վարքի նորմ, որը կարող է ծառայել որևէ պահանջմունք բավարարելու համար»: [3] Արժեքը իրականության առարկաների և երևույթների հասարակական–մշակութային էությունն է, որը նորմատիվային նշանակություն է ձեռք բերում: Արժեքային կողմնորոշումների ձևավորումը տևական գործընթաց է, որն առնչվում է անձի կենսագործունեությանը և հոգևոր էությանը և կարող է ընդգրկել մարդու ամբողջ կյանքը, սակայն դրա հիմքերը դրվում են դեռևս մանկական տարիքում՝ նրա ձևավորման վաղ փուլում:

[2] Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., «Ան–Ձոն», 2011, 160 էջ:

[3] Նալչաջյան Ա. Ս., Հոգեբանական բառարան, Եր., «Լույս», 1984, 237 էջ:

Ազգային արժեքային համակարգի գլխավոր նպատակը կայացած անհատներ դաստիարակելն է: Արժեքների մի մեծ խումբ հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ բոլոր անհատներն ունեն հավասար արժեք ու հավասար արժանապատվություն, հավասար հարգանքի արժանանալու և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նույն շարքից օգտվելու իրավունք , և պետք է համապատասխան վերաբերմունքի արժանանան: Այս համոզմունքը ենթադրում է, որ մարդու իրավունքները համամարդկային են, անօտարելի ու անբաժանելի և առանց տարբերակման տարածվում են բոլորի վրա: Մարդու իրավունքներն ապահովում են պաշտպանությունների նվազագույն շեմ, որը շատ կարևոր է մարդկանց՝ արժանապատիվ կյանքով ապրելու համար, և մարդու իրավունքներն աշխարհում ապահովում են ազատության, հավասարության , արդարության և խաղաղության այս առանցքային հիմքը: Արժեքների հաջորդ այլ խումբ հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ հարկ է դրական վերաբերվել, գնահատել ու փայփայել այլ մշակութային պատկանելիություններին, մշակութային փոփոխականությանն ու բազմազանությանը և տեսակետների, կարծիքների ու գործելակերպի բազմազանությանը: Այս համոզմունքը ենթադրում է , որ մշակութային բազմազանությունը կարևոր արժեք է հասարակության համար , մարդիկ կարող են սովորել և օգուտ քաղել այլոց բազմակարծությունից, մշակութային բազմազանությունը պետք է խթանել և պաշտպանել, պետք է ոգևորել մարդկանց, որ շփվեն միմյանց հետ ՝ անկախ մշակութային տարբերությունների մասին իրենց ընկալումներից, իսկ միջմշակութային երկխոսությունից պետք է օգտվել հասարակության մեջ որպես հավասարների ՝ միասին ապրելու ու ժողովրդավարական մշակույթը զարգացնելու համար: Արժեքների մեկ այլ խումբ հիմնված է մի խումբ համոզմունքների վրա առ այն , թե հասարակություններն

ինչպես պետք է գործեն և կառավարեն ներառյալ այն համոզմունքները, որ բոլոր քաղաքացիները պարտադիր պետք է հնարավորություն ունենան հավասար կերպով մասնակցելու հասարակությունը կարգավորող օրենքների սահմանման և ստեղծման ընթացակարգին: Բոլոր քաղաքացիները հասարակության ներսում պետք է ակտիվորեն մասնակցեն ժողովրդավարական գործընթացներին, թեև որոշումները պետք է կայացվեն մեծամասնության կողմից, սակայն նաև պետք է ապահովվել արդարացի և հավասար վերաբերմունք բոլոր տեսակի փոքրամասնությունների նկատմամբ, սոցիալական արդարությունը, անկողմնակալությունը և հավասարությունը պետք է աշխատեն բոլոր մակարդակներում: Այսպիսով՝ պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ, բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները, վրա է հասնում ոգու սովը: Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:[4]

Ասվածից կարելի է եզրակացնել, որ այժմ էլ ավելի պետք է կարևորվի մտավորականության դերը, որովհետև վերջիններիս միջոցով է իրականացվում ապագա սերնդի կողմից արժեքային համակարգի ընկալումը: Ունենք պատասխանատու, բարեխիղճ, ազգային նկարագիրը կրող ավագ սերունդ, կունենանք նաև այդ որակները ունեցող ապագա սերունդներ:

[4] Սարգսյան Ա.Ա.,Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, հոդված,ԵՊՀ,Իջևան

Ազգային արժեքների դրսևորումը «Մայրենիի» դասավանդման ընթացքում

Հանրակրթական պետական չափորոշիչը սահմանում է. «Հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանվում է ըստ կրթական ծրագրերի աստիճանների՝ ուսումնական բնագավառների ուղղվածությանը համապատասխան առարկայական չափորոշիչների, ծրագրերի միջոցով և սույն չափորոշչի համաձայն ներառում է հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված ու սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական ու գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները»:

13. Չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

1) գիտելիք.

2) հմտություն.

3) դիրքորոշում.

4) **արժեքային բաղադրիչ**:[5]

Արժեհամակարգի ձևավորումը սկսվում է տարրական դպրոցից և գնալով ավելի է կատարելագործվում, ավելի է ամրապնդվում միջին և ավագ դպրոցներում:

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ու զարգացման առումով առանձնահատուկ տեղ ու դեր ունի տարրական դպրոցը, քանի որ այնտեղ է երեխան հաղորդակից դառնում հասարակական-գիտական նախնական տեղեկատվությանը և վերջինս առօրյա կյանքում վերամիաստավորելու նախնական փորձ ձեռք բերում: Մասնավորապես՝ մայրենիի ուսուցումը արժեքներին հաղորդակցվելու լավագույն միջոցներից է: Սա նշանակում է, որ մայրենիի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-քերականական նախնական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրանց միջոցով նաև ազգային, հոգևոր ու բարոյական արժեհամակարգին հաղորդակցման ապահովում:[6]

Մայրենիի ուսուցումը երեխայի առջև բացում է դեպի արժեքային համակարգի տանող ճանապարհներից մեկը՝ նրա համար բացահայտելով այն խնդիրներն ու նպատակները, որոնք նա պետք է դնի իր առջև արժեքային համակարգի բարձրագույն կետին հասնելու համար: Տարրական դասարանում ստացած գիտելիքները նրանց անպայման օգնում են հասկանալու և գնահատելու գեղեցիկը, բարոյականը, և ավելի արդյունավետ լինելու իրենց ընտրած գործունեության բնագավառում:

Մայրենիի դասավանդման ամեն դաս ներառում է արժեհամակարգի ձևավորման նպաստող դասանյութեր: Օրինակ 2-րդ դասարարանի դասագրքում տեղ է գտել «Իմ անուշիկ Հայաստան» թեման: Այն ուսումնասիրելու համար մենք կկազամկերպենք ինտեգրված դաս: Թեմայի ուսումնասիրման ընթացքում սովորողը պետք է ձևավորի հաղորդակցական և համագործակցային կարողություններ մայրենի առարկայից: Ինտեգրված տեխնոլոգիա առարկայից կզարգացնի մանր մկանները՝ կտրելու, ներկելու, սոսնձելու միջոցով, «ես և շրջակա աշխարհը» առարկայից՝ կիմանա Հայաստանի վարչական բաժանումները, մարզերը, *մարզկենտրոնները*, կկարողանա ցույց տալ դրանք քարտեզի վրա, կճանաչի իր

[6] Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak:

հայենիքը, կձևավորվի հայրենասիրական, հայենաճանաչողական որակներ, որոնք ազգային արժեհամակարգի ամենակարևոր տարրերից են:

Խթանման փուլում հանձնարարվում է գրել «Հայաստան» բառի սկզբնատառերով բառեր կազմել:



Իմաստի ընկալման փուլում սովորողին տրվում են հարցեր.



Այնուհետև բաժանել խմբերի: Աշխատանք ըստ ուսուցման աստիճանների:

I աստիճան- կտրել մարզը:

II աստիճան- մարզի վրա նշել մարզկենտրոնը:

III աստիճան- ստանալ Հայաստանի վարչական քարտեզ:



Յուրաքանչյուրը ներկայացնում է մարզի մասին տեղեկություններ՝ լճեր, գետեր, պատմամշակութային հուշարձաններ, գործիչներ, իրադարձություններ:

Կշռադատման փուլում հանձնարարվում է գրել ակրոստիքոս «Հայաստան» բառի արդեն ունեցած բառերով:

Այս աշխատանքը սովորողի մոտ ձևավորում է հայրենասիրական, մշակութային արժեքներ: Սովորողները միմյանց նկատմամբ ձևավորում են փոխադարձ հարգանք: Այս որակները շատ կարևոր են արժեհամակարգի ձևավորման համար:

Եզրակացություն

Երբ փլուզվում են արժեքները մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատվում են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Հաղթանակի համար պետք է ձևավորել իրական արժեքներ: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

Այսպիսով՝ մայրենիի դասավանդման ընթացքում ուսումնական տարաբնույթ նյութերի նպատակային ուսումնասիրումը ոչ միայն համալրում է սովորողների գիտելիքները, զարգացնում է նրանց մտածողությունը, այլև ներարկում է նրանց մեջ սեր հայրենիքի պատմության ու մշակույթի նկատմամբ, բարձրացնում է հայրենասիրական դաստիարակությունը:

Քսաներորդ դարավերջի և քսանմեկերորդ դարասկզբի քաղաքացին հասկանում էր, որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին: Դրանք էին՝

●լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,

●դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն:

Գրականության ցանկ

1. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Մակմիլան Արմենիա, 2007
2. Թորգոմյան Լ. Վ., Մանկավարժական արժեբանության հիմունքներ, Եր., «Ան–Ձոն», 2011:
3. Նալչաջյան Ա. Ս., Հոգեբանական բառարան, Եր., «Լույս», 1984:
4. Սարգսյան Ա.Ա.,Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, հոդված,ԵՊՀ,Իջևան
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
6. Փարեմուզյան Ի., Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում, ՎՊՀ «Գիտական տեղեկագիր», Ա պրակ, https://vsu.am>grqer>aprak:

Հավելված 1

Դասի պլան

Ուսուցիչ՝ Մարետա Հակոբյան

Առարկա՝ մայրենի

Դասարանը՝ 2-րդ

Ինտեգրված դաս՝ «Իմ անուշիկ Հայաստան»

Ինտեգրված առարկաներ՝ տեխնոլոգիա, ես և շրջակա աշխարհը

Նպատակները.

Մայրենի ՝

Հաղորդակցական և համագործակցային կարողությունների ձևավորում:

Տեխնոլոգիա.

Կզարգանա մանր մկաաանները՝կտրելու, ներկելու, սոսնձելու միջոցով:

Ես և շրջակա աշխարհը.

Կիմանա Հայաստանի վարչական բաժանումները, մարզերը, մարզկենտրոնները, կկարողանա ցույց տալ դրանք քարտեզի վրա,

Կճանաչի իր հայրենիքը,

Արժեքային.

Սեր հայրենի երկրի նկատմամբ:

Միջոցներ, պարագաներ-նշանավոր մարդկանց նկարներ, պաստառներ, քարտեզներ, ատլաս:

Ընթացքը ԽԻԿ

Խթանում (**3-5 րոպե**)

Մտքերի տարափով գրել «Հայաստան» բառի սկզբնատառերով բառեր:

Իմաստի ընկալում- (**35 րոպե**)

Հարցեր ուղղել երեխաներին :

Որն է մեր հայրենիքը:

Ինչ անուններ է ունեցել Հայաստանը:

…….

Բաժանել Հայաստանի մարզերը եռամակարդակ:

I աստիճան- կտրել մարզը:

II աստիճան- մարզի վրա նշել մարզկենտրոնը:

III աստիճան- ստանալ Հայաստանի վարչական քարտեզ:

Յուրաքանչյուրը ներկայացնում է մարզի մասին տեղեկություններ՝ լճեր, գետեր, պատմամշակութային հուշարձաններ, գործիչներ, իրադարձություններ:

Տնային աշխատանք

Տանը «Հրաշք տետրում» գրել Հայաստանի խորհրդանիշների (ծիրան, նուռ, խաչքար) մասին տեղեկություններ և նկարել:

Կշռադատման փուլ (5 րոպե)

Գրել ակրոստիքոս «Հայաստան» բառի արդեն ունեցած բառերով:

Գնահատել երեխաների պատասխանները: